Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1785 - Լ որոշման

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ կանոնակարգվում են Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողության նպատակով դիտարկումների տարեկան ծրագրի կազմման ընդհանուր մոտեցումները:

2. Դիտարկումների տարեկան ծրագրի կազմման նպատակը տեսչական մարմնի ռեսուրսները առավել թիրախային նպատակաուղղելն է, որը պահանջում է դիտարկման ենթակա սուբյեկտների ռիսկայնության աստիճանների որոշում և ըստ նշված աստիճանների՝ դրանց հետագա դասակարգում:

2. ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

3. Սույն մեթոդաբանության տեսանկյունից ռիսկը անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում օրենսդրության պահանջների թույլ տված խախտումների հավանականությունն է՝ հաշվի առնելով պատճառված հնարավոր վնասի ծանրության աստիճանը:

4. Ռիսկայնության միավորը վերագրվելու է անձի ֆունկցիոնալությունը գնահատող առանձին մասնագետներին, ամփոփագիր մշակած կամ ֆունկցիոնալության գնահատման ուղեգիր տված մասնագետներին, որոնք սույն մեթոդաբանության տեսանկյունից համարվելու են անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում վերահսկողության ենթակա սուբյեկտներ:

3. ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5. Անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում տեսչական մարմնի կողմից վերահսկողության ենթակա սուբյեկտների ռիսկը գնահատվում է ֆունկցիոնալության գնահատող հանձնաժողովների կամ վերահսկողության ենթակա առանձին սուբյեկտների գործունեության վերլուծության հիման վրա:

6. Ռիսկայնության առավելագույն կշիռը սահմանվում է 100 միավոր, որից 50 միավորը վերագրվում է վերահսկողության ենթակա սուբյեկտի գործունեության կամ ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի աշխատանքի վերլուծության արդյունքով, իսկ մյուսը 50 միավորը՝ ստուգաթերթով իրականացված դիտարկման արդյունքով:

7. Ֆունկցիոնալության գնահատող մասնագետների գործունեության վերլուծությունն իրականացվելու է ըստ առանձին չափորոշիչների՝ համաձայն N 1 աղյուսակի:

Աղյուսակ N 1

NN ը/կ	**Չափորոշիչը**	**Միավորները**			
		2	**4**	**8**	**10**
1.	Մասնագետի կողմից գնահատված անձանց քանակը	Մասնագետների կողմից գնահատված անձանց քանակի միջին ցուցանիշի մինչև 20%	Մասնագետների կողմից գնահատված անձանց քանակի միջին ցուցանիշի 20-70%	Մասնագետների կողմից գնահատված անձանց քանակի միջին ցուցանիշի 71-150%	Մասնագետների կողմից գնահատված անձանց քանակի միջին ցուցանիշի 151% և ավելին
2.	Տվյալ մասնագետի գծով գնահատման արդյունքների (ներառյալ ծառայությունների անհատական ծրագրի) կամ դրանց առանձին բաղադրիչների դեմ բերված և բավարարված բողոքարկումների տոկոսայնությունը	Բողոքարկված և բավարարված դեպքերի ցուցանիշը մինչև 20% է	Բողոքարկված և բավարարված դեպքերի ցուցանիշի 20-50% է	Բողոքարկված և բավարարված դեպքերի ցուցանիշի 51-70% է	Բողոքարկված և բավարարված դեպքերի ցուցանիշի 71-100% է
3.		**Միավորները**			

	Մասնագետի մասնակցությամբ կազմված հանձնաժողովի/ հանձնաժողովների աշխատանքների արդյունքների գնահատում (մի քանի առանձին չափանիշով համապատասխանության առկայության դեպքում հիմք է ընդունվում առավելագույն միավորը)	0	2	4	6	10
		Գնահատման արդյունքներով ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը սահմանվել է ցածր 4%-ից	Գնահատման արդյունքներով ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը սահմանվել է 4-24% միջակայքում	Գնահատման արդյունքներով ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը սահմանվել է 25-49% միջակայքում	Գնահատման արդյունքներով ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը սահմանվել է 50-74% միջակայքում	Գնահատման արդյունքներով ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը սահմանվել է 75-100% միջակայքում
		Միավորները				
		0	**10**			
		Գնահատված անձանց մասով չի սահմանվել անժամկետ հաշմանդամություն	Գնահատված անձանց մասով սահմանվել է անժամկետ հաշմանդամություն			
4.	Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգի խախտման հիմքով կիրառված վարչական պատասխանատվության միջոցները	**Միավորները**				
		0	**3**	**10**		
		Վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել	Կիրառվել է վարչական տուգանք	Վարչական տուգանք և նախկինում հավաստագրից զրկում		

8. Ֆունկցիոնալության գնահատման ուղեգիր տված կամ ամփոփագիր մշակող մասնագետների գործունեության վերլուծությունը իրականացվելու է ըստ առանձին չափորոշիչների՝ համաձայն N 2 աղյուսակի:

Աղյուսակ N 2

NN ը/կ	**Չափորոշիչը**	**Միավորները**			
		3	**6**	**12**	**15**
1.	Տրված ուղեգրերի կամ լրացված ամփոփագրերի քանակը	Տրված ուղեգրերի կամ լրացված ամփոփագրերի միջին ցուցանիշի մինչև 20%	Տրված ուղեգրերի կամ լրացված ամփոփագրերի միջին ցուցանիշի 20-70%	Տրված ուղեգրերի կամ լրացված ամփոփագրերի միջին ցուցանիշի 71-150%	Տրված ուղեգրերի կամ լրացված ամփոփագրերի միջին ցուցանիշի 151% և ավելին
2.	Ամփոփագիր մշակող մասնագետի կողմից մերժված դիմումների տոկոսային հարաբերակցությունը	մինչև 20%	20-50%	51-70%	71-100%

	ընդունված դիմումների հետ				
3.	Մերժված ուղեգրերի տոկոսայնությունը	մինչև 20%	20-50%	51-70%	71-100%
4.	Անձի ֆունկցիոնալու-թյան գնահատման կարգի խախտման հիմքով կիրառված վարչական պատասխա-նատվության միջոցները	**Միավորները**			
		0	**10**	**20**	
		Վարչական պատաս-խանատվության միջոց-ներ չեն կիրառվել	Կիրառվել է վարչական տուգանք	Վարչական տուգանքներ և նախկինում կասեցված լիցենզիա	

9. Անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում տեսչական մարմնի կողմից վերահսկողության ենթակա սուբյեկտների ռիսկը հաշվարկվում է առանձին մասնագետների գործունեության վերլուծության և ստուգաթերթով իրականացված դիտարկման արդյունքների հիմքով ստացված միավորների հանրագումարով:

10. Եթե տվյալ մասնագետը գործունեություն է իրականացրել մի քանի ուղղությամբ (հանձնաժողովի աշխատանքների մասնակցություն, ուղեգրերի տրամադրում, ամփոփագրի լրացում), ապա ըստ առանձին ուղղությունների՝ նրա ռիսկայնության միավորը հաշվարկվում է առանձին:

4. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

11. Վերահսկողության առանձին ուղղություններով (հանձնաժողովի աշխատանքների մասնակցություն, ուղեգրերի տրամադրում, ամփոփագրի լրացում) անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում վերահսկողության ենթակա սուբյեկտները դասակարգվում են ըստ ռիսկայնության աստիճանի նվազման:

12. Ըստ վերահսկողության առանձին ուղղությունների դիտարկումների տարեկան ծրագրում ներգրավվող սուբյեկտների քանակը որոշվում է տեսչական մարմնի ղեկավարի կողմից՝ դիտարկումների իրականացմանը նախորդող տարվա վերջին ամսվա ընթացքում:

13. Դիտարկումների տարեկան ծրագրում ներառվում են առավելագույն ռիսկայնության միավոր ստացած սուբյեկտները:

14. Եթե առանձին սուբյեկտը տվյալ ուղղությամբ ներառվել է դիտարկումների տարեկան ծրագիր, ապա դիտարկումների տարեկան ծրագիր ներառվում են նաև տվյալ ուղղությամբ նույն ռիսկայնության միավորը ստացած մյուս բոլոր սուբյեկտները:

15. Դիտարկումն իրականացվում է այն գործունեության մասով, որի վերլուծության արդյունքներով սուբյեկտը ներառվել է դիտարկումների տարեկան ծրագրում:

16. Վերահսկողության ենթակա սուբյեկտը միայն մեկ ուղղությամբ կարող է ներառվել դիտարկումների տարեկան ծրագրում: Մեկից ավելի ուղղությամբ դիտարկումների տարեկան ծրագիր ներառման ենթակա սուբյեկտի վերահսկողության ուղղությունը որոշվում է՝ հաշվի առնելով դիտարկվող ուղղություններով նրա ռիսկայնության միավորների և այդ ուղղություններով առավել ռիսկային սուբյեկտների ստացած միավորների համամասնությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ